

**ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CRIMINAL PROCEDURE/УГОЛОВНЫЙ
ПРОЦЕСС**

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-165>

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի
ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան*

ARTUR GHAMBARYAN

*Head of the Department of Legal Theory and Constitutional Law at the Russian-Armenian
University, Professor of the Academy of Public Administration of the Republic of Armenia,
Doctor of Law, Professor,
Honored Lawyer of the Republic of Armenia*

АРТУР ГАМБАРИАН

*Заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского
университета, профессор Академии государственного управления РА,
доктор юридических наук, профессор,
Заслуженный юрист РА
ORCID ID: 0000-0002-6322-4664*

**ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**ISSUES IN THE APPLICATION OF PREVENTIVE MEASURES TO
ENSURE THE FULFILLMENT OF THE DEFENDANT'S PROCEDURAL
OBLIGATIONS**

**ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ МЕР ПРЕСЕЧЕНИЯ С ЦЕЛЬЮ
ОБЕСПЕЧЕНИЯ ВЫПОЛНЕНИЯ ПРОЦЕССУАЛЬНЫХ
ОБЯЗАННОСТЕЙ ОБВИНЯЕМОГО**

Ներածություն

Խափանման միջոցները քրեադատավարական հարկադրանքի ավանդական տեսակնե-
րից են, որոնք տարբեր անվանումներով և տարբեր համակարգերով (տեսակներով) մշտա-

պես հանդիսացել են քրեադատավարական իրավունքի և օրենսդրության մասը:

Վաղուց անվիճելի է այն պարզ ճշմարտությունը, որ խափանման միջոցները հանցագործություն կատարած անձին պատժելու միջոց չեն, այսինքն՝ դրանք քրեական պատիժներ չեն¹:

Զարգացնելով «խափանման միջոցը պատիժ չէ» գաղափարը՝ հայկական դատավարագիտության և օրենսդրության մեջ ճանաչում ստացավ այն մոտեցումը, որ խափանման միջոցը ոչ միայն պատիժ չէ, այլ նաև այն չպետք է պարունակի պատժի տարրեր: Այսպես՝ Մ. Խաչատրյանը դեռևս 1974 թ. նշել է. «Անմեղության կանխավարկածից հետևում է, որ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, մեղադրյալի նկատմամբ կարելի է կիրառել միայն դատավարական սանկցիաներ, որոնք չպետք է պարունակեն պատժի տարրեր: Խափանման միջոցների վերաբերյալ օրենսդրությունում անհրաժեշտ է նախատեսել նորմ, ըստ որի՝ մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել այնպիսի սահմանափակումներ, որոնք թելադրված են նախաքննության և դատական քննության նպատակներով»²:

1998 թ. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ ՀՀ ՔրԴՕ) 18-րդ հոդվածի (Անմեղության կանխավարկածը) 5-րդ մասում ամրագրվեց հետևյալ նորմը՝ «կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր»: Անմեղության կանխավարկածից բխող այս կարևոր դրույթն 2021 թ. ՀՀ ՔրԴՕ-ում չամրագրվեց: Դրա փոխարեն անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սկզբունքին վերաբերող հոդվածում նշվեց, որ վարույթի ընթացքում անձին ազատությունից զրկելը չպետք է պատժի նպատակ հետապնդի (ՀՀ ՔրԴՕ 18-րդ հոդվածի 1-ին մաս):

Իրականում «խափանման միջոցը չպետք է պարունակի պատժի տարրեր» դրույթը բխում է ոչ թե անձի ազատության և անձնական անձեռնմխելիության սկզբունքից, այլ անմեղության կանխավարկածից, որը վերահաստատեց նաև ՀՀ Սահմանադրական դատարանը 30.07.2025 թ. ՍԴՈ-1792 որոշմամբ:

Խափանման միջոցները ոչ միայն քրեական պատիժներ չեն, այլ նաև խախտում թույլ տված մեղադրյալին քրեադատավարական պատասխանատվության ենթարկելու միջոցներ չեն: Ի հակառակ այս պնդման՝ դատավարագիտության մեջ տարիներ շարունակ լայն ճանաչում է ստացել այն մոտեցումը, որ եթե մեղադրյալը խախտել է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, ապա կիրառված խափանման միջոցն ավելի խիստ տեսակի խափանման միջոցով փոխարինելը համարվում է դատավարական պատասխանատվության միջոց³: Այս տարածված սխալի հիմքում ընկած է մեկ այլ սխալ թեզ, ըստ որի՝ խափանման

¹ Люблинский П. И., Свобода личности в уголовном процессе: меры, обеспечивающие неуклонение обвиняемого от правосудия. Санкт-Петербург: Сенат. тип., 1906. С. 11-12, Фойницкий И. Я. Курс уголовного судопроизводства. в 2-х т. Т. 2 / Общ. ред., послесл., прим.: Смирнова А.В. С.-Пб.: Изд. Альфа, 1996. С. 327-328.

² Хачатрян М., Уголовно-процессуальное законодательство Армянской ССР и вопросы его совершенствования: автореф. дисс. ... канд. юр. наук. М., 1974. С. 13.

³ Чечина Н. А., Элькин П. С., Об уголовно-процессуальной и гражданской процессуальной ответственности // Советское государство и право. 1973. № 9. С. 33-34, Филущенко А. А., Об уголовно-процессуальном принуждении // Правоведение. 1974. № 3. С. 108-109, Столмаков А. И., Понятие и классификация санкций норм уголовно-процессуального права // Правоведение. 1977. № 3. С. 41, Корнуков В. М., Меры процессуального принуждения в уголовном судопроизводстве. Саратов. Изд. Сарат. ун-та, 1978. С. 10-11, Зинатуллин З. З., Уголовно-процессуальное принуждение и его эффективность (вопросы теории и практики). Казань, Изд. Казан. ун-та, 1981. С. 13-15, Ветрова Г. Н., Уголовно-процессуальная ответственность. М.: Изд. Наука, 1987. С. 60, Громов Н.А., Полунин С.А., Санкции в уголовно-процессуальном праве России. М.: Изд. Городец, 1998. С. 76-77, Вепрев В. С., Основания уголовно-процессуальной ответственности. М.: Изд. Юрлитинформ, 2007. С. 16, Галдин М. В. Изменение обвиняемому меры пресечения на более строгую как реализация уголовно-процессуальной

միջոցը թեև կանխատեսողական բնույթ ունի (կիրառվում են մեղադրյալի հնարավոր ապօրինի վարքագիծը կանխելու համար), սակայն երբեմն այն կարող է կիրառվել նաև տեղի ունեցած փաստի հիմքով, օրինակ՝ մեղադրյալի կողմից հակաօրինական վարքագիծ դրսևորելու փաստի՝ փախուստի դիմելու, կամ վկաների վրա ապօրինի ազդելու հիմքով: Այս տարածված մոտեցումը վերանայման կարիք ունի:

Խափանման միջոցը որևէ պարագայում մեղադրյալին դատավարական իմաստով պատժելու կամ պարսավելու նպատակ չի հետապնդում, նրա միակ նպատակը մեղադրյալի հնարավոր ապօրինի վարքագիծը կանխելն (խափանելն) է: Եթե մեղադրյալը թույլ է տվել դատավարական խախտում (խախտել է կիրառված խափանման միջոցի պայմանները և դիմել է փախուստի), ապա կիրառված խափանման միջոցը փոխարինվում է մեկ այլ տեսակի խափանման միջոցով ոչ թե մեղադրյալին պատժելու նպատակով, այլ այն բանի համար, որ կիրառված խափանման միջոցը պիտանի չէր կանխելու մեղադրյալի ապօրինի վարքագիծը, իսկ մեղադրյալի թույլ տված խախտման փաստը ծանրակշիռ (անհրաժեշտ ու բավարար) գործոն է եզրակացնելու, որ բարձր է մեղադրյալի կողմից ապագայում հակաիրավական վարքագիծ դրսևորելու ռիսկը: Այս իրավիճակում խափանման միջոցը ոչ թե թույլ տրված խախտումներին արձագանքելու (պատժելու) գործիք է, այլ նրա հնարավոր հակաօրինական վարքագիծը խափանելու միջոց է: Այլ կերպ ասած՝ խափանման միջոցի կիրառման պայմանների խախտման փաստը մեղադրյալի կողմից ապագայում ևս անօրինական վարքագիծ դրսևորելու բարձր ռիսկը գնահատելու և պիտանի խափանման միջոց ընտրելու ծանրակշիռ գործոններից մեկն է:

Պատահական չէ, որ օրենսդիրն իրավացիորեն հրաժարվել է ՀՀ ՔրԴՕ 29-րդ հոդվածի 4-րդ մասում «խափանման միջոցը կարող է փոխարինվել ավելի խստով» ձևակերպումից⁴ և դրա փոխարեն օգտագործում է «խափանման միջոցը կարող է փոխարինվել այլ՝ առավել պիտանի խափանման միջոցով» ձևակերպումը: Առավել պիտանի խափանման միջոցը կարող է իր բնույթով լինել նաև առավել խիստ, սակայն օրենսդիրը, նկատի ունենալով «խափանման միջոցը պատիժ չէ» գաղափարը, ընտրել է ճիշտ ձևակերպում:

Ասվածի համատեքստում ընդունելի չէ, երբ դոկտրինալ աղբյուրներում նշվում է, որ «(...) այս դեպքում գործ ունենք ոչ թե պարտականությունը չկատարելու ռիսկի, այլ չկատարելու փաստի հետ»⁵: Պարտականություն չկատարելը խափանման միջոց կիրառելու հիմք չէ, կամ անձին կալանավորելու հիմք չէ: Դատավարական պարտականություն չկատարելու փաստը ծանրակշիռ գործոն է գնահատելու մեղադրյալի կողմից ապագայում *նույն* կամ *համանման* այլ պարտականությունները չկատարելու բարձր ռիսկը (այս մասին հաջորդիվ): Իսկ դատավարական պարտականությունները չկատարելու փաստը հիմք է մեղադրյալի նկատմամբ ՀՀ ՔրԴՕ 17-րդ գլխով նախատեսված դատավարական սանկցիաներ կիրառելու համար:

ответственности // Судебная власть и уголовный процесс. 2016. № 2. С. 131-136, Ղամբարյան Ա., Շաթիրյան Է., Իրավաբանական պատասխանատվության նոր տեսակները // Օրինականություն, 2007, № 39, էջեր 24-29, Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ., Քրեադատավարական սանկցիաները (գիտագործնական մեկնաբանություններ): Եր.: Տիգրան Մեծ, 2022, էջ 15:

⁴ Նախագծի 29-րդ հոդվածի սկզբնական տարբերակում օգտագործվում էր «խափանման միջոցը կարող է փոխարինվել ավելի խստով» ձևակերպումը: Տե՛ս *Ավերիսյան Դ.*, Կալանավորման կիրառման իրավաչափության հիմնահարցերն ըստ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջ 208:

⁵ *Ավերիսյան Դ.*, Կալանավորման կիրառման իրավաչափության հիմնահարցերն ըստ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջեր 192-193:

Հիմնական հետազոտություն

ՀՀ ՔրԴՕ 116-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Խափանման միջոցը կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է՝ 1) մեղադրյալի փախուստը կանխելու համար կամ 2) մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու համար կամ 3) մեղադրյալի կողմից իր վրա սույն օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար»⁶:

Խափանման միջոցի օրենքով թվարկված նպատակները սպառնիչ են, ուստի խափանման միջոցը չի կարող կիրառվել օրենքով չնախատեսված այլ նպատակներով: Խափանման միջոցի կիրառման նպատակներ ցանկում դատավճռի կատարումն ապահովելը, հասարակական անկարգությունները կանխելը կամ մեղադրյալի անվտանգությունն ապահովելը նախատեսված չեն:

Իրավահամեմատական տեսանկյունից խափանման միջոցի կիրառման նպատակների ընդհանուր ճանաչում ստացած համակարգերում մեղադրյալի կողմից իր վրա օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու նպատակը հազվադեպ է հանդիպում (նման դրույթ առկա է Ուկրաինայի ՔրԴՕ 177-րդ հոդվածի 1-ին մաս), ուստի այն առանձին քննարկման կարիք ունի:

Պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով խափանման միջոցն իրավաչափ կերպով կիրառելու համար պետք է հաշվի առնել ստորև նշված հանգամանքները:

Նախ՝ պետք է հասկանալ, թե մեղադրյալի դատավարական ռիսկ պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով կարող է կիրառվել խափանման միջոց՝ մեղադրյալի կարգավիճակը սահմանող ՀՀ ՔրԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասում լիարժեք փակ ցանկի ձևով⁷ թվարկված մեղադրյալի պարտականությունների, թե նաև օրենքով նախատեսված այն ընդհանուր պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով, որոնց կրողը կարող է լինել նաև մեղադրյալը: Այսպես՝ մեղադրյալը, որպես վարույթի մասնավոր մասնակից, կարող է կրել ընդհանուր պարտականություններ, օրինակ՝ ՀՀ ՔրԴՕ 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծանուցվողը պարտավոր է ընդունել թղթային ծանուցագիրը: Եթե ծանուցվողը մեղադրյալն է, ապա նա կրում է թղթային ծանուցագիրն ընդունելու պարտականություն: Նկատի ունենալով՝ տեսական այն դրույթը, որ մարդու իրավունքները սահմանափակող պետական հարկադրանքներին վերաբերող նորմերը պետք է մեկնաբանել սահմանափակ կամ տառացի, ուստի օրենքով նախատեսված «մեղադրյալի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար» ձևակերպումը պետք է մեկնաբանել տառացի, ինչը նշանակում է, որ խափանման միջոցի այս նպատակի պարագայում խոսքը բացա-

⁶ ՀՀ ՔրԴՕ-ում «խափանման միջոցի կիրառման հիմք» ընդհանուր ձևակերպումը էքսպլիցիտ չի օգտագործվում (թեև ՀՀ ՔրԴՕ-ում կալանքի վերաբերյալ հոդվածներում երբեմն հանդիպում են «Կալանքի տակ պահելու հիմք» ձևակերպումը, օրինակ՝ ՀՀ ՔրԴՕ 119-րդ հոդվածի 1-ին մաս): Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ խափանման միջոցի կիրառման հիմքերը քրեադատավարական իրավունքի օբյեկտիվ համակարգում գոյություն չունեն: Դրանք բխում են խափանման միջոցի նպատակներից: Այսպես՝ օրենքով որպես խափանման միջոցի նպատակ նշված է, որ այն կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է՝ մեղադրյալի փախուստը կանխելու համար: Այս նպատակից հեշտությամբ կարելի է բխեցնել այս նպատակով կիրառվող խափանման միջոցի հիմքը՝ խափանման միջոցը կիրառվում է, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է դիմել փախուստի: Ստացվում է, որ խափանման միջոցի նպատակները կոնկրետ վարույթում ակտուալանում են, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կարող է դրսևորել ոչ օրինական վարքագիծ՝ կարող է դիմել փախուստի, կարող է կատարել նոր հանցանք և այլն: Խափանման միջոցը նպատակ ունի կանխելու նման հնարավոր վարքագիծը:

⁷ Լիարժեք և ոչ լիարժեք փակ ցանկերի մասին տես *Ղամբարյան Ա.*, Օրենսդրական փակ ցանկերի տեսաիրավական հիմքերը // Հանրային կառավարում, 2025, Vol. 22, № 1, էջեր 163-179:

ռապես ՀՀ ՔրԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասում հատուկ մեղադրյալի համար սահմանված պարտականությունների կատարման ապահովման մասին է: Մեղադրյալի դատավարական պարտականություններն են՝

- 1) ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով,
- 2) վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական զննման, մատնադրոշմման, անձնական խուզարկության, քննման և փորձաքննության, լուսանկարվել կամ փորձաքննության համար հանձնել օրենսգրքով նախատեսված նմուշներ,
- 3) չխոչընդոտել քրեական վարույթին, այդ թվում՝ ապօրինի չմիջամտել ապացուցման գործընթացին,
- 4) այլ վայր մեկնելիս վարույթն իրականացնող մարմնին նախապես տեղեկացնել իր գտնվելու նոր վայրի և իր հետ հաղորդակցվելու միջոցների մասին,
- 5) ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին և դատական նիստի կարգին:

Երկրորդ՝ մեղադրյալի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով խափանման միջոց կարող է կիրառվել, եթե հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալն ապագայում չի կատարի իր պարտականությունները: Ինչպես նշվեց, խափանման միջոցը չի կարող կիրառվել զուտ մեղադրյալի կողմից իր պարտականությունը չկատարելու փաստի ուժով, քանի որ խափանման միջոցը կոչված է կանխելու (խափանելու) մեղադրյալի հնարավոր հակահրավակական վարքագիծը և ոչ թե, որպես պատիժ, արձագանքելու մեղադրյալի կողմից թույլ տրված խախտումներին:

Եթե խափանման միջոցը կիրառվի զուտ մեղադրյալի կողմից խախտում թույլ տալու հիմքով, ապա դա կնշանակի, որ գործ ունենք, ոչ թե խափանման միջոցի, այլ պատժի հետ: Օրինակ՝ եթե մեղադրյալը չի կատարել փորձաքննության համար նմուշներ հանձնելու իր պարտականությունը, ապա, որպես դրա հետևանք, մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել դատավարական սանկցիա կամ կարող է գործադրվել ֆիզիկական հարկադրանք (ՀՀ ՔրԴՕ 18-րդ հոդվածի 7-րդ մաս): Այս պարտականությունը չկատարելու համար մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելը կնշանակի, որ նրան պատժում են:

Այլ բան է, որ այդ պարտականությունը չկատարելը պետք է դիտել ծանրակշիռ գործոն, որը էապես բարձրացնում է ապագայում մեղադրյալի՝ վարույթը չխոչընդոտելու պարտականությունը չկատարելու ռիսկը: Ապագայում նրա այս հակահրավակական անգործությունը (նմուշներ չհանձնելը) կանխելու համար նրա նկատմամբ պետք է կիրառվի պիտանի խափանման միջոց, օրինակ՝ գրավ, երաշխավորություն:

Այսպիսով, պետք է խուսափել հետևյալ ձևակերպումները օգտագործելուց՝ «պարտականությունների չկատարումը խափանման միջոց կիրառելու հիմք է», կամ «անձը կալանավորվում է պարտականությունները չկատարելու հիմքով»:

Երրորդ՝ դատավարական պարտականություն չկատարելու փաստը ծանրակշիռ գործոն է գնահատելու մեղադրյալի կողմից ապագայում *նույն* կամ *համանման* այլ պարտականությունները չկատարելու ռիսկը: Նմուշներ հանձնելու պարտականությունը չկատարելու փաստն *ինքնին բավարար հիմք* չէ կանխատեսելու, որ մեղադրյալն առհասարակ չի կատարի իր մյուս բոլոր դատավարական պարտականությունները: Այսպես՝ եթե մեղադրյալը չի կատարել փորձաքննության համար նմուշներ հանձնելու պարտականությունը, ապա դա ինքնին բավարար հիմք չէ ենթադրելու կամ կանխատեսելու, որ նա չի կատարի նաև վարույթին իրականացնող մարմնի հրավերով ներկայանալու պարտականությունը: Նմուշներ հանձնելու պարտականությունը և վարույթն իրականացնող մարմնի հրավերով ներկայանալու պարտականություն-

նը տարաբնույթ են, որի պայմաններում բացակայում է տրամաբանական կամ փաստական որևէ նախադրյալ, ինչը թույլ կտար եզրակացնելու, որ մի պարտականությունը չկատարելու դեպքում նա ապագայում չի կատարի մեկ այլ բնույթի պարտականությունը:

Կոնկրետ պարտականություն չկատարելու փաստը ողջամտորեն հիմք է տալիս կանխատեսելու մեղադրյալի կողմից *նույն* կամ *համանման* պարտականությունն ապագայում չկատարելու հնարավորությունը: Օրինակ՝ եթե մեղադրյալը չի կատարել փորձաքննության համար նմուշներ հանձնելու պարտականությունը, ապա սա բավարար հիմք է կանխատեսելու, որ նա ապագայում կրկին չի կատարի այլ տեսակի նմուշներ հանձնելու (նույն) կամ փորձաքննության ենթարկվելու (համանման) պարտականությունները⁸:

Չորրորդ՝ մեղադրյալի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով խափանման միջոց ընտրելիս խստագույնս պետք է պահպանել համաչափության սկզբունքի *պիտանիության* թեստը, այսինքն՝ եթե առկա են հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը չի կատարի կոնկրետ պարտականությունը, ապա պետք է ընտրել այնպիսի խափանման միջոց, որի բովանդակությունը կազմող իրավասահմանափակող (ապահովող) միջոցները կարող են (պիտանի են) ապահովելու՝ հասնելու իրավաչափ նպատակին: Օրինակ՝ բժշկական զննման ենթարկվել պարտականության կատարումն ապահովելու նպատակի համար կալանքը պիտանի խափանման միջոց չէ: Եթե հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը կամավոր չի կատարի այս պարտականությունը, ապա որպես պիտանի խափանման միջոց կարող է համարվել օրինակ՝ գրավը, երաշխավորությունը:

Խափանման միջոցների համատեքստում առանձին պետք է քննարկել մեղադրյալի դա-

⁸ ՀՀ առաջին ատյանի դատարանը թիվ ՇԴ/0231/06/17 գործով 25.12.2017 թ. որոշմամբ՝ մեղադրյալի կողմից նմուշներ հանձնելու պարտականությունը կատարելուց հրաժարվելը որակել էր գործի քննությանը խոչընդոտել և եզրակացրել էր, որ «ազատության մեջ գտնվելով հնարավոր է նաև այլ եղանակներով շարունակի խոչընդոտել գործի բնականոն ընթացքին, ապացույցների հավաքմանը»:

ՀՀ վերաքննիչ դատարանը թիվ ՇԴ/0231/06/17 գործով 26.01.2018 թ. որոշմամբ չէր համաձայնվել ՀՀ առաջին ատյանի դատարանի այն դիրքորոշման հետ, որ մեղադրյալը նմուշներ հանձնելուց հրաժարվելով խոչընդոտել է ապացույցներ հավաքելու գործընթացին և, ի թիվս այլ պատճառների, նշել էր նաև հետևյալ հանգամանքը՝ «անձն ունի մեղադրյալի կարգավիճակ, ինչի պայմաններում իր դեմ վկայելու մոտեցումն արդարացվում է»:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ՇԴ/0231/06/17 գործով 18.04.2018 թ. որոշմամբ բեկանել էր ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումը՝ օրինական ուժ տալով մեղադրյալի նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու մասին ՀՀ առաջին ատյանի դատարանի որոշմանը:

Գործնականում շատերը ՀՀ Վճռաբեկ դատարանի այս որոշումը մեկնաբանում են այնպես կարծես, թե ՀՀ Վճռաբեկ դատարանը էքսպլիցիտ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ նմուշ չհանձնելը վարույթին խոչընդոտել է և ինքնին կալանք կիրառելու հիմք է: Իրականում ՀՀ Վճռաբեկ դատարանն այս մասին ուղիղ դիրքորոշում չի հայտնել, նա միայն էքսպլիցիտ նշել է այն մասին, որ իր դեմ վկայություն չտալու հիմնարար իրավունքը չի կարող մեկնաբանվել այնպես, որ վկայի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձի համար նմուշներ հանձնելու պարտականության կատարումից հրաժարվելը դիտարկվի որպես այդ հիմնարար իրավունքի իրացման դրսևորման ձև (տես որոշման 14-րդ կետի 3-րդ պարբերությունը):

Այս հարցով ՀՀ Վճռաբեկ դատարանի պոզիտիվ դիրքորոշման բացակայության պայմաններում, կարելի է միայն կատարել ենթադրյալ դատողություններ կամ եզրահանգումներ: Այսպես՝ ելնելով այն փաստից, որ ՀՀ Վճռաբեկ դատարանն այս գործով օրինական ուժ է տվել ՀՀ առաջին ատյանի դատարանի որոշմանը, կարելի է պարզապես *ենթադրել*, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը համաձայնվել է ՀՀ առաջին ատյանի դատարանի հետ, որ այդ գործի հանգամանքների համատեքստում նմուշ չտալը վարույթին խոչընդոտելու եղանակ է, որը բարձրացնում է համանման պարտականություններն ապագայում չկատարելու ռիսկը: Ինչ վերաբերում է նմուշ չհանձնելու պայմաններում կալանք կիրառելու անհրաժեշտության մասին, ապա ՀՀ Վճռաբեկ դատարանն այս մասն դիրքորոշում չի հայտնել:

Հիշեցնենք, որ նմուշ չհանձնելու փաստն ինքնին բավարար չէ պնդելու կալանք կիրառելու անհրաժեշտության մասին: Խափանման միջոցի տեսակը պետք է որոշել՝ ելնելով մեղադրյալի ապօրինի վարքագիծ դրսևորելու ռիսկը բարձրացնող և նվազեցնող գործոնների քանակական և որակական վերլուծության արդյունքներից:

տավարական պարտականությունները չկատարելու իրավական հետևանքները:

ՀՀ ՔրԴՕ 29-րդ հոդվածի 4-րդ մասի հետ, որի համաձայն՝ մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց, կամ կիրառված խափանման միջոցը կարող է փոխարինվել այլ՝ առավել պիտանի խափանման միջոցով:

ՀՀ ՔրԴՕ 117-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտության դեպքում իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում այլ՝ առավել պիտանի խափանման միջոց կիրառելու համար:

Ինչպես նշվեց, ՀՀ ՔրԴՕ 29-րդ հոդվածի 4-րդ մասում և 117-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդիրն իրավացիորեն շեշտը դրել է ոչ թե կիրառված խափանման միջոցը *առավել խիստ*, այլ՝ *առավել պիտանի* խափանման միջոցով փոխարինելու վրա: Առավել պիտանի խափանման միջոցը կարող է իր բնույթով լինել նաև առավել խիստ, սակայն օրենսդիրը, նկատի ունենալով «խափանման միջոցը պատիժ չէ և պատժի տարրեր չի պարունակում» գաղափարը, ընտրել է ճիշտ ձևակերպում:

Բանավեճերի տեղիք է տվել այն հարցը, թե որն է կիրառված խափանման միջոցն առավել պիտանի միջոցով փոխարինելու հիմքը՝ կիրառված խափանման միջոցի պայմանները խախտելը, թե՛ մեղադրյալի կողմից որևէ պարտականություն չարամտորեն չկատարելը, անկախ նրանից՝ կիրառված խափանման միջոցը ի սկզբանե նպատակ հետապնդում էր ապահովելու այդ պարտականության կատարումը, թե՛ ոչ: Օրինակ՝ մեղադրյալի նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելք խափանման միջոցը, որի նպատակն է կանխել մեղադրյալի փախուստը (ՀՀ ՔրԴՕ 127-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ մեղադրյալը վարույթի ընթացքում չի կատարում նմուշներ հանձնելու պարտականությունը: Այս պարտականությունը չկատարելն արդյոք հիմք է բացակայելու արգելք այլ խափանման միջոցով փոխարինելու համար, թե՛ այն կարող է փոխարինվել այլ պիտանի խափանման միջոցով, եթե մեղադրյալը փորձել է դիմել փախուստի:

Այս հարցի պատասխանը ՀՀ ՔրԴՕ 117-րդ հոդվածի 3-րդ մասի տեսանկյունից հստակ է՝ բացակայելու արգելքը, նմուշներ հանձնելու պարտականությունը չկատարելու հիմքով, չի կարող փոխարինվել այլ «պիտանի» խափանման միջոցով, այն պարզ պատճառով, որ բացակայելու արգելքը «*In abstracto*» նմուշներ հանձնելու պարտականության կատարումն ապահովելու համար պիտանի միջոց չէ, այն ի սկզբանե չի կիրառվել այն հիմքով, որ մեղադրյալը կարող է ապագայում հրաժարվել կատարելու նմուշներ հանձնելու պարտականությանը: Ուստի մեղադրյալը չի խախտել բացակայելու արգելքի հետ կապված որևէ պայման:

Այս իրավիճակում մեղադրյալը խախտել է օրենքով նախատեսված դատավարական պարտականությունը սահմանող նորմը, որը հիմք է այնպիսի խափանման միջոց (բացակայելու արգելքի հետ համակցված) կիրառելու համար, որը պիտանի է ապագայում ապահովելու նմուշներ հանձնելու պարտականության կատարումը, օրինակ՝ գրավը, երաշխավորությունը, զինվորական հսկողությունը:

Եթե նույն հարցը քննարկվի ՀՀ ՔրԴՕ 29-րդ հոդվածի 4-րդ մասի տեսանկյունից, ապա այս դրույթի պարզ ընթերցումից կարող է ստեղծվել այնպիսի տպավորություն, որ եթե մեղադրյալը չի կատարում որևէ պարտականություն, անկախ նրանից, թե դա առնչվում է կիրառված խափանման միջոցի նպատակներին և դրանից բխող պայմաններին, թե ոչ, ապա խափանման միջոցը փոխարինվում է առավել պիտանի խափանման միջոցով:

ՀՀ ՔրԴՕ 29-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նման կերպ մեկնաբանողներն ամենայն հավանականությամբ ենթագիտակցորեն *առավել պիտանի խափանման միջոց* ասելով նկատի

ունեն *առավել խիստ խափանման* միջոցը: Մինչդեռ, ինչպես նշվեց, օրենսդիրը հրաժարվել է «առավել խիստ խափանման միջոց» ձևակերպումից և դրա փոխարեն օգտագործել է «առավել պիտանի խափանման միջոց» ձևակերպումը: Վերը նկարագրված իրավիճակում բացակայելու արգելքը շարունակում է պիտանի միջոց լինել իր նպատակին (մեղադրյալի փախուստը կանխելու) հասնելու համար, ուստի բացակայելու արգելքը մեկ այլ խափանման միջոցով փոխարինելու (այն վերացնելու) համար որևէ իրավական կամ տրամաբանական հիմք չկա: Հակառակ դեպքում կստացվի, որ բացակայելու արգելքի պայմանների հետ չկապված պարտականությունը չկատարելու (նմուշներ չհանձնելու) դեպքում բացակայելու արգելքը փոխարինվում է ոչ թե մեկ այլ պիտանի, այլ խիստ խափանման միջոցով, իսկ դա նշանակում է, որ խափանման միջոցը կիրառվում է ոչ թե մեղադրյալի հակաիրավական արարքը կանխելու, այլ՝ նրան պատժելու համար: Կրկին նշենք, որ խափանման միջոցը կոչված է կանխելու (խափանելու) մեղադրյալի հնարավոր հակաիրավական վարքագիծը և ոչ թե, որպես պատիժ, արձագանքելու մեղադրյալի կողմից թույլ տրված խախտումներին:

ՀՀ ՔրԴՕ 29-րդ հոդվածի 4-րդ մասի նման պարզեցված մեկնաբանությունը խախտում է «նպատակ – պիտանի միջոց» սահմանադրական ներդաշնակությունը: Կարևոր է նկատի ունենալ, որ մեղադրյալի նկատմամբ կիրառվում է ոչ թե խափանման միջոց *ընդհանրապես*, այլ կոնկրետ տեսակի խափանման միջոց, որը կոչված է ապահովելու ոչ թե խափանման միջոցի նպատակներն *ընդհանրապես*, այլ՝ այդ տեսակի խափանման միջոցին *հատուկ* նպատակներ: Օրինակ՝ մեղադրյալի ներկայանալը և նրա այլ պարտականություններ կատարելն ապահովելու նպատակներին հասնելու ներդաշնակ միջոցներ են՝ գրավը, երաշխավորությունը, դաստիարակչական կամ զինվորական հսկողությունը, բայց ոչ՝ բացակայելու արգելքը: Վերջինիս նպատակը կոնկրետ է՝ մեղադրյալի փախուստը կանխելն է:

Այսպիսով՝ ՀՀ ՔրԴՕ 29-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է երկու այլընտրանքային իրավական հետևանք. եթե մեղադրյալը չարամտորեն չի կատարել իր որևէ պարտականություն, ապա նրա հնարավոր հակաիրավական վարքագիծը կանխելու համար կիրառվում է նոր խափանման միջոց (այդ թվում՝ համակցված), որը պիտանի է ապագայում ապահովելու այդ պարտականության կատարումը: Իսկ եթե մեղադրյալի նկատմամբ արդեն իսկ կիրառվել է համապատասխան խափանման միջոց, որը կոչված էր ապահովելու որևէ պարտականության կատարումը, սակայն այն պիտանի չի եղել հասնելու իր նպատակին (այսինքն՝ մեղադրյալը խախտել է կիրառված խափանման միջոցի պայմանը), ապա կիրառված խափանման միջոցը փոխարինվում է առավել պիտանի խափանման միջոցով, որը պիտանի կլինի կանխելու մեղադրյալի հնարավոր հակաիրավական վարքագիծը:

Եզրակացություն

Մեղադրյալի դատավարական պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով խափանման միջոցի կիրառումը պետք է հիմնված լինի խիստ իրավական չափանիշների վրա: Առաջին հերթին, խափանման միջոցը կարող է կիրառվել միայն ՀՀ ՔրԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասում առանձնացված կոնկրետ պարտականությունների կատարումն ապահովելու համար:

Եթե մեղադրյալը խախտել է օրենքով նախատեսված պարտավորեցնող նորմերը և չի կատարել իր դատավարական պարտականությունը, ապա դա ոչ թե ինքնին խափանման միջոց կիրառելու հիմք է, այլ ծանրակշիռ գործոն է գնահատելու մեղադրյալի կողմից ապագայում *նույն* կամ *համանման* այլ պարտականությունները չկատարելու բարձր ռիսկը

Խափանման միջոցը չի կարող կիրառվել որպես պատժամիջոց արդեն կատարված

խախտման համար, այլ պետք է ծառայի բացառապես ապագա հակաօրինական վարքագիծը կանխելու նպատակին: Խախտման միջոցի ընտրության դեպքում պետք է պահպանվի համաչափության սկզբունքը՝ ընտրելով այնպիսի միջոց, որը պիտանի է կոնկրետ պարտականության կատարումն ապահովելու համար:

Ամփոփագիր: Հոդվածում ներկայացվում է մեղադրյալի դատավարական պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով խախտման միջոցի կիրառման հարցերը: Հեղինակը մանրամասն վերլուծում է ՀՀ ՔրԴՕ 116-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, որը թույլ է տալիս խախտման միջոց կիրառել մեղադրյալի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով:

Հատուկ ուշադրություն է դարձվում այն դատավարական պարտականությունների շրջանակը որոշելու վրա, որոնց կատարումն ապահովելու նպատակով կարող է կիրառվել խախտման միջոց: Հեղինակը նշում է, որ այս նպատակով խախտման միջոց կարող է կիրառվել ոչ թե բոլոր դատավարական պարտականություններն ապահովելու, այլ միայն ՀՀ ՔրԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված հատուկ պարտականությունների կատարումն ապահովելու համար:

Հոդվածում ընդգծվում է, որ խախտման միջոցի կիրառման հիմք պետք է հանդիսանա ապագայում պարտականությունները չկատարելու ռիսկը, և ոչ թե արդեն կատարված խախտումը: Հակառակ դեպքում խախտում թույլ տալու պատճառաբանությամբ խախտման միջոց կիրառելը (փոխելը) կվերածվի դատավարական պատասխանատվության միջոցի:

Annotation. The article addresses issues related to the application of preventive measures aimed at ensuring the fulfillment of the defendant's procedural obligations. The author provides a detailed analysis of Article 116, Part 2, Point 3 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, which permits the application of preventive measures to ensure the defendant's compliance with imposed obligations.

Special attention is given to defining the scope of procedural obligations whose fulfillment may be secured through preventive measures. The author emphasizes that such measures may be applied only to ensure the fulfillment of specific obligations listed in Article 43, Part 2 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, and not all procedural obligations.

The article underscores that the basis for applying a preventive measure must be the risk of future non-compliance with obligations, rather than an already committed violation. Otherwise, applying (or modifying) a preventive measure based on an existing violation would transform it into a tool of procedural liability.

Аннотация. В статье рассматриваются вопросы применения мер пресечения с целью обеспечения выполнения процессуальных обязанностей обвиняемого. Автор подробно анализирует часть 2 пункт 3 статьи 116 Уголовно-процессуального кодекса Республики Армения, который допускает применение мер пресечения для обеспечения выполнения возложенных на обвиняемого обязанностей.

Особое внимание уделяется определению круга процессуальных обязанностей, для обеспечения выполнения которых может применяться мера пресечения. Автор указывает, что мера пресечения может применяться для обеспечения выполнения не всех процессуальных обязанностей, а только конкретных обязанностей, перечисленных в части 2 статьи 43 УПК РА.

В статье подчеркивается, что основанием для применения меры пресечения должна являться оценка риска невыполнения обязанностей в будущем, а не уже совершенное нарушение. В противном случае применение (или изменение) меры пресечения по причине допущенного нарушения превратит её в средство процессуальной ответственности.

Բանալի բառեր - խախտման միջոց, պարժի տարրեր, մեղադրյալ, դատավարական պարտականություն, ռիսկի գնահատում, պարտականություն չկատարելը:

Keywords: preventive measure, elements of punishment, defendant, procedural obligation, risk assessment, non-compliance with obligations.

Ключевые слова: мера пресечения, элементы наказания, обвиняемый, процессуальная обязанность, оценка риска, невыполнение обязанностей.

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Դ., Կալանավորման կիրառման իրավաչափության հիմնահարցերն՝ ըստ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2014, էջեր 186- 211:
2. Ղամբարյան Ա., Օրենսդրական փակ ցանկերի տեսա-իրավական հիմքերը // Հանրային կառավարում, 2025, Vol. 22, № 1, էջեր 163-179:
3. Ղամբարյան Ա., Իսրայելյան Շ., Քրեադատավարական սանկցիաները (գիտագործնական մեկնաբանություններ): Եր.: Տիգրան Մեծ, 2022, 176 էջ:
4. Ղամբարյան Ա., Շաթիրյան Է., Իրավաբանական պատասխանատվության նոր տեսակները // Օրինականություն, 2007, № 39, էջեր 24-29:
5. Вепрев В. С., Основания уголовно-процессуальной ответственности. М.: Изд. Юрлитинформ, 2007. 232 с.
6. Ветрова Г. Н., Уголовно-процессуальная ответственность. М.: Изд. Наука, 1987. 111 с.
7. Галдин М. В., Изменение обвиняемому меры пресечения на более строгую как реализация уголовно-процессуальной ответственности // Судебная власть и уголовный процесс. 2016. № 2. С. 131-136.
8. Громов Н. А., Полуниин С. А., Санкции в уголовно-процессуальном праве России. М.: Изд. Городец, 1998. 152 с.
9. Зинатуллин З. З., Уголовно-процессуальное принуждение и его эффективность (вопросы теории и практики). Казань, Изд. Казан. ун-та, 1981. 136 с.
10. Корнуков В. М., Меры процессуального принуждения в уголовном судопроизводстве. Саратов. Изд. Саратов. ун-та, 1978. 136 с.
11. Люблинский П. И., Свобода личности в уголовном процессе: меры, обеспечивающие неуклонение обвиняемого от правосудия. Санкт-Петербург: Сенат. тип., 1906. 711 с.
12. Столмаков А. И., Понятие и классификация санкций норм уголовно-процессуального права // Правоведение. 1977. № 3. С. 40 - 46.
13. Филющенко А. А., Об уголовно-процессуальном принуждении // Правоведение. 1974. № 3. С. 108-110.
14. Фойницкий И. Я., Курс уголовного судопроизводства. в 2-х т. Т. 2 / Общ. ред., послесл., прим.: Смирнова А.В. С.-Пб.: Изд. Альфа, 1996. 606 с.
15. Хачатрян М., Уголовно-процессуальная законодательство Армянской ССР и вопросы его совершенствования: автореф. дисс. ... канд. юр. наук. М., 1974. 24 с.
16. Чечина Н. А., Элькинд П. С., Об уголовно-процессуальной и гражданской процессуальной ответственности // Советское государство и право. 1973. № 9. С. 33-41.

Ղամբարյան Ա. - Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան, էլիստգե՝ artur.ghambaryan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 02.09.2025 թ., տրվել է գրախոսության 02.09.2025 թ., երաշխավորվել է ի.գ.թ., փաստաբան Ա. Ղազարյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.: